



ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 9 » հուլիսի 2017թ.

N 142/Մ

ք. Ստեփանակերտ

2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ,  
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2016-2017 ուսումնական տարվա գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին (ստորաբաժանման ղեկավարներին)՝ 2016-2017 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպել ըստ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 297/Մ հրամանով հաստատված աշխատակարգի:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հաստատված ժամանակացույցը տպագրել «Լուսարար» պաշտոնաթերթի առաջիկա համարում և տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:



Ս. ԱՄՐՅԱՆ

Հավելված՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կրթության, գիտության և սպորտի նախարարի  
2017 թվականի մայիսի 5-ի  
N 142/Մ հրամանի

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ  
ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

1. **4-րդ դասարանում** գտեղիքների ստուգումն անցկացվում է.

Առարկա	Ստուգման օրը
«Մայրենի» թելադրություն	01.06.2017թ.
«Մաթեմատիկա» գրավոր	03.06.2017թ.
«Ռուսաց լեզու» բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում	10.06.2017թ.

2. **9-րդ դասարանի** ավարտական քննություններն անցկացվում են.

Առարկա	Ստուգման օրը
«Հայոց լեզու և գրականություն» փոխադրություն	05.06.2017թ.
«Գրականություն» բանավոր	08.06.2017թ.
«Մաթեմատիկա» գրավոր	12.06.2017թ.
«Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) բանավոր՝ սովորողի ընտրությամբ	15.06.2017թ.
«Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» գրավոր՝ սովորողի ընտրությամբ	19.06.2017թ.
«Հայոց պատմություն» բանավոր	22.06.2017թ.

«Ռուս գրականություն» բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար	26.06.2017թ.
«Ֆիզկուլտուրա» Քննություն / նորմատիվների հանձնում	Ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ մինչև քննաշրջանի սկսելը: Օրը որոշում է հաստատությունը:

3. 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններն անցկացվում են.

Առարկա	Ստուգման օրը
«Հայոց լեզու և հայ գրականություն» գրավոր	07.06.2017թ.
«Մաթեմատիկա» գրավոր	14.06.2017թ.
«Հայոց պատմություն» գրավոր	21.06.2017թ.
«Ռուս գրականություն» բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար	23.06.2017թ.
«Ֆիզկուլտուրա» Ստուգարք / նորմատիվների հանձնում	Ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ մինչև քննաշրջանի սկսելը: Օրը որոշում է հաստատությունը: